

վերածեց ու իր ընթերցողներուն ըն-
ծայեց անոնց շահագրգիռ հրատա-
րակութիւնները կեղեքողին ու անոր
գործին վրայ:

Մեծ կեղեքողը մինակ չէ սակայն.
ունի իր ստորաբաժանումները որոնք,
դժբաղդաբար, մեր արիւնէն են ու ու-
կորէն. փոքրիկ կեղեքողները, բռնա-
կալիկներ, որոնք մեր միա՛նտրիւնն
ու եռանդը կը շահագործեն. կեղեքող
քարեքարներ որոնք, խորունկ ուսմուն-
քի առարկայ ըրած են հոգեբանու-
թիւնը ռամիկին, որ իրենց մշակու-
թեան ու վարուցանի յարմար ու ար-
գասանդ հոգն է. գիտեն անոնք, այդ
բռնակալիկները թէ՛ ժողովուրդը մի-
ամիտ է, կը խաբուի, կը շլանայ տիտ-
ղոսներէն ու աժան բարիքներէ. գի-
տեն թէ՛ ժողովուրդին եռանդը չափ
ու կշիռ չ'ունի. անի խելքով չը գոր-
ծեր, այլ սրտով. ուստի դիւրին է զանի
շահագործելը: Ահա՛ այդ աւելի վը-
տանգաւոր կեղեքիչները դիմակազերծ
ընելու համա՛ր է որ Փիի՛նիկ ամբողջ
տարի մը մաքառեցաւ. կեղեքիչներ,
որոնցմէ ոմանք բաւական ատեն յա-
ջողեցան պտրտիլ դիմակով առանց
մատնուելու, Օրէնքի պաշտպանի դի-
մակով իջան հրապարակ, տիտղոս մը,
պաշտօն մը խլելու միակ տենչովը
տանջուող ռամիկ ու գռեհիկ կեղե-
քողներ, որոնք ժողովուրդին եռանդը
շահագործել ուզեցին ու յաջողեցան
քանի մ'օրուան համար:

Աղեքսա՛դրիոյ ազգային գործե-
րուն շուրջը միլուած պայքարը՝ կար-
ծուածէն շատ աւելի օգտակար ար-
դիւնք մը առաւ:

Ս. Առաջնորդը, Գեր. Տ. Յովսէփ
Նպ. Ս. յվազեան, որ — դոնէ իր անձ-
նական վկայութեամբ — խոհեմ եկե-
ղեցականի մը համբաւով հոս սոք
դրաւ, ժողովուրդին անբարոյացումը
պատրաստեց իր երկգիմը, տատամ-
ստ ու հաճոյակատար վարմունքովը:

նախ ինք տուաւ դէշ օրինակը՝ գլուխ
ծուելու կամայականութեան առջև,
Սահ՛նանադրութեան հո՛ւս աշ գործա-
դրութիւնը պահանջելու իմաստով ի-
րեն մատուցուած հանրագրութեանը՝
չը աւելով պահանջուած ուշագրութիւ-
նը. այն հանրագրութեան որ հրատա-
րակուեցաւ Փիի՛նիկի 10րդ թիւին մէջ
1901 Օգոստ. 10 թուականով:

Առաջնորդին հետ ու անոր ետե-
ւէն կաշգով դուրս եկան Բէիղեան
չըջանի Ա. ժ. Թաղ. Խորհուրդին ան-
դամները, Անթաղ Գիակին պատանքը
հագնող գրագիրը, Ա. քատախնամին
Գանձապետը — որ յետոյ Ընտրողա-
կանէն վկայեալ ելաւ — ու անդամ-
ները, ասոնց ստորադասեալ պաշտօն-
եաներն ու պաշտպանները. քեռայր,
քենեկալ, խնամի եւն, իւր սաշօք.
լէգէօնը շահամոլներուն, կեղծա-
ւորներուն, աղանդամուկ կուսակցական-
ներուն, պահպանողական սղէտներուն,
ուխտեալ յետագէտներուն, տիրասէր
ստրուկներուն, բարի ու հաւատարիմ
ծառաններուն, ծախուած ու վարձուած
օրկանծներուն:

Այս լէգէօնը, տարի մ'ամբողջ
ակուայ ու ճիրան շոյց տուաւ, օրէն-
քին բռնաբարիչները փառաբանելու
տիտեր պաշտօնը կատարեց. բայց, ի
վերջոյ, Մամուլը յաղթանակեց, ճըշ-
մարտութեան ու օրէնքին յաղթանա-
կը. ու այդ բոլոր Բաբելոնը, սուտե-
րու բուրգը կործանեցաւ, փլաւ շէնքը
կեղծիքին, ու շինողները դիմակազերծ
եղան, ճարտարապետ թէ՛ որմնադիր,
տոհմիկ թէ՛ ռամիկ: Այս վերջիններէն
է նաև այն դասալիք պարոնը, որ ժո-
ղովուրդին քթին խնդալ փորձեց իր
«ժոյն/ուրդը չը խաբուիր» ու «դարձ-
եալ իր Մրիկայութեան ծայրայեղու-
թիւնը» կրկին յօդուածներովը. (վեր-
ջինին վերլուծումովը պիտի զբաղինք
օր մը): Ըսել է թէ՛ պայքարը մէկէ
աւելի օգուտներ առաջ բերաւ, դոնէ

օրէնքին ճշմարիտ ու կեղծ պաշտպաններն իրարմէ որոշելու տեսակէտով:

ՓիիՆիկի Բ. տարեշրջանին առաջին կէտը գեռ չը լրացած, գաղափարն ունեցանք հրատարակելու Կենսագրութիւն մը, ոչ ծառայէր իբրև ուղեցոյց ազգային շարժումին ու վերածնութեան. ու ընտրեցինք ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻՆԸ: Կրնայինք զայն առանձին հատորով մը տալ ընթերցասէր հասարակութեան, բայց մեր նպատակը չէր վիպական կամ պատմական երկ մ'ընծայել ժամանցի կամ առժամանակեայ պարագուծի մը համար, այլ հրահանգել ու մշտ սվառ պահել էր հայ երիտասարդութեան միտքն ու սիրտը, պարբերաբար հրատարակելով անմահ ու անմահ հայրենասէրին, ՀԱՅՐԵՆԵԱՅ ՈՐԴԻԻՆ կեանքը, որ միշտ ու միշտ մեր ազգային քաղաքական — յեղափոխական կեանքին այժմէութիւնն է:

Կը յուսանք թէ այս մէկ երկու տողերը կը բաւեն համոզելու մեր ընթերցողներէն անոնք, որ այդ կենսագրութեան գեռ տեւելուն դէմ դիտուելութիւններ ըրած են կամ կ'ընեն:

Երանի՜ թէ Արտասահմանի իւրաքանչիւր թերթ իր միջավայրովը պարպէր. այն ատեն հայ մամուլը լիովին կատարած պիտի ըլլար իր դերը: Կարգ մը հանդէսներու էջերը լեցնող շահեկան ուսումնասիրութիւնները լաւագոյն էր որ առանձին հատորներով հրատարակուէին: Լրագիրներուն ու հանդէսներուն նպատակը պիտի ըլլայ ո՛չ միայն զբօսցունել, այլ նաև կրթել ու առաջնորդել. անցեալի փոշիները քրքրելու փոխանակ՝ ներկային արիւնին ու մոխիր՝ երուն մէջէն ջանալ հանելու ապագային յոյսերն ու լոյսերը...

Մեր այս համառօտ տեսութեամբ, կը փակենք ՓիիՆիկի Բ. Տարեշրջանը,

խոստանալով անփոփոխ պահել միշտ մեր ուղղութիւնն ու նպատակը:

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիլեգրիմի)

ԳԻՐՔ Բ.

Գ.

(Պայտառ Յուսէպ մեջ)

Միշտ մնալով վերանորոգչի իր գլխաւոր դերին մէջ, զոր արդէն կը կատարէր արիւնոտ դէպքերէն առաջ, անփոփոխ պիտի պահէ իր մարտնչողի դերը ու պիտի յազեցընէ Թուրքերուն դէմ իր սիր, «Եթէ իմ երէրիս» գործիչներուն հետ ջանալով զրգուել յոյն ժողովուրդը, ու պիտի չ'ընկրկի յանդերձորէն շքեղ արհամարհանք մը նետելէ մարդասպան Սուլթանին հրոսակներուն ետեւէն, ինչպէս որ ըրին մարական պատերազմներուն ժամանակ, աշատութիւնն ու մտածումը պաշտպանելու համար բռնակալութեան ու բարբարոսութեան դէմ, միւսողն աւտեն, Եւրոպայի մէջ պիտի փնտռէ ուրիշ նեցուկներ, պիտի վաստկի համակրութիւններնու բարի կամքը Պետական մարդերուն, նախարարներուն ու ռամկապետական ազգեցիկ անձնաւորութիւններուն: Պետի տիրանայ ամբողջներուն շնորհներուն ու դատին համար պիտի յնէ ամեն բան, որպէս զի կարեղի դարձունէ վճռական գործողութիւն մը այն օրն ուր ազգն ինք զինք զգալով արժանի ու ատակ, Երիտ ուղէ վըրէժը լուծել 300000 մարտիրոսներուն: Ու այս աննախընթաց գործունէութեան մէջ, իր երկաթի կորովի կամքովը այնպէս պիտի մնայ մինչև իր վերջին վարկեանները, շնորհիւ իր ազգային անսպառելի գորովանքին:

Անի պիտի չը հասնի իր մշտավառ նպատակին, որ է վարել հրամանատարութիւնն ու պաշտպանութիւնը Հայերուն՝ մեր հայրենի հողին քանի մը անառիկ գաւառներուն մէջ. բայց իր ջանքերը, զորս իր մահովը պսակեց, պիտի ծառայեն մեզ աշխուսցնելու և մեզի ցոյց տալու թէ՛ միակ գաղտնիքը ՄԵՐ ՄՕՏԱԼՈՒՏ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ կը կայանայ մեր բարոյական, մտաւորական, տնտեսական ու քաղաքական շահերուն անվհատ պաշտպանութեանը մէջ:

Աւարտելէ ետք իր գործերն 'ի Յունաստան ու խիստ գոհ իր հոն կատարած գործողութեանց ամբողջութենէն, կը պատրաստէ իր 'ի Փրանսա պայքարն ու կը պատրաստուի մեկնել:

Բայց, հետեւելէ առաջ անոր 'ի Բարիզ առաքելութեան — որուն պիտի ջանանք պատմել ամենէն գրաւիչ փուլերը, կարելի ճշգրութեամբը մէջ բերելով — քիչ մ'ալ կանգ առնուինք մեր հերոսին հետ հելլենական գերող հողին վրայ ուր ինք ալ կը փափագէր անպայման երկարել իր բնակութիւնը, ու մեռնիլ հոն իսկ, Փիթիասի հայրենիքին մէջ, որուն, այս աստուածային արձանագործի՛ն գլուխ գործոցներուն նշմարները կ'երթար անդադար դիտել Ակրոպօլի թանգարանը. անի կազէր որ իր գերեզմանն ունենալ հայրենիքին մէջ Դրիգուբիսին, արդի Յունաստանի Բարենորոգչին, որուն ասիւնները կը յարգէր պաշտուծով Աթէնքի գերեզմանատան մէջ:

ՌԻՎԻԻ ՏԷ ՌԻՎԻԻ՛ն խօսելով Տիգրան Երկաթի այս բնակութեան վրայ 'ի Յունաստան, քանի մը հառուածներ կ'արտագրէ անոր նամակներէն, զորս իր մօր ուղղած է:

Մենք այդ հատուածները նոյնութեամբ կը թարգմանենք, ինչպէս նաև հետեւեալ տողերը, զորս յիշեալ

Հանգէսը նուիրած է անոր այդ նամակներուն առթիւ.

«Տիգրան Երկաթ՝ սպառնութեան ալեւազոյսը նրառքին մ'ունէր: Անի կը սիրէր ալեւն սեղի զանոնք իր մօրը ձօնել: մեկն հետեւեալ հաստատները կը գտնենք Աթենքէն իր մօրը գրած նամակներէն»:

Ահաւասիկ թարգմանութիւնն այս թանկագին հատուածներուն.

«Հիրաւնոցն եւ Պարթեկոնի, միևսալիս գեղեցկագոյններէն. յուսամոտներս կը բացուին Ակրոպօլի վրայ, գիւշերով ու աւերակներով ծածկուած դաշտին վրայ ու ԳՕՆԳՕՐՏԻ մեծ հրապարակին վրայ: Հաւայն նոր է փայլիկ մէջ. նոր թէ հին, կրկնուեն է ալեւազեղ բաներուն, զորս նախնիք կ'առուցած են. ուրուանկար մը մարտերուն, կամարներու, ակադեմիաներու, սիգապէն Արթենասներու եւ Հերկեսներու: Իր ելեկտրական շոյտերուն սակ Աթենք աւելի գեղեցիկ է քան թէ ցերեկը, գեղեցիկ՝ շարժուելով, երիսասարդութեամբ, շատուութեամբ, յրագրավաճառներու մոլեգիկ աղաղակներովը, որոնք կը բարձրաճայնեան հայկական դէպքը, փողերը կը հնչեն, ելեկտրական, շոգեշարժ կառները կը խաչաձեւեան գիրար, անթիւ սպաները կը պսրսցնեն շողշողուն զարդեր ու կոճակներ, սրճարանները կ'երգեն, կ'ածեն օրքէստրներ կամ մանսօյիկի պարզ սօլօ մը: Միևերկա ճաշեցի, որ Աթենքի Վուապէնն է (1), պերճանք ու պարզութիւն: Կը թողում ինչ երթալ այցելելու հաւար հայկական վրաններն ու սեւեւելու յոյն յրագրապետներ: Մնաս բարեւ, սիրելի՛ մայրիկ:

Ահաւասիկ նոյնպէս երկու հատուածներ Աթէնքի իր նամակներէն.

(1) Բարիզի Վուապէն ճաշարանին կ'ակնարկէ:

... Անուշիկ մայրիկս... Թո ի Գօն-
 գօրսի հրապարակին հիւրանոցս ու հաս-
 տատուեցայ անգլիական շքեղ օթեանի
 մը մէջ ոչ շինուած է Թագուորին ու
 Թրանսական դեսպանատան պարտեզ-
 ներուն միջև։ Պատշգամէս լուսածագին
 կը տեսնեմ լոկ ծաղիկ, ծառ. երկրորդ
 տեսարանին կը տարածուի արքայական
 պալատը. երշարդին — քաղքին վերև
 — կը բարձրանայ Ակրօպօլն ու Պար-
 թենսնը, ինչպէս նաև կարիագիտէսնե-
 րը ոչ ջինջ ու վճիռ կը սլանան Սա-
 լամինայի ծովախորշէն, Պելոպօնէսի
 լեռները հեռաւոր կղզիներէ ձեւա-
 ցած կապոյտ ու ոսկեզօծ յատակի մը
 վրայ. ի՞նչ տօն Շաղօպրիան խառնու-
 ած քով հոգիի մը համար։ Առաւօտեան
 ճամը 7 է և ինծի բերել կուգան թէյ
 մը զոր քեզի հետ պիտի ուզէի բաժ-
 նել — թէյ մը չեմ գիտեր քանի՞
 քանի յարակիցներով, զանազան բա-
 ժակներ, կարագ, քաղցրաւենիք, Իմէ-
 տայի մեղր, տղայութիւն ըրի մայրի-
 կին համար աթոռ մը քշելու առաջ... :

... Աւելորդ է յիշել թէ կ'զգուշա-
 նամ գպշելու բոլոր այս քաղցրութիւն-
 ներուն. անցած շաբթուան մէջ անհան-
 գատութիւն մ'ունեցայ, որ զիս պա-
 հել տուաւ մէկ օր անկողին ու երկու
 օր սենեակը։ Բարեկամներս, Աթենք
 հասած չը հասած լուրը, քովս շերին
 քաղքին մեծանուն Երիտասարդը,
 Տօգդ. Գալինտուլիս և իրենց գիտու-
 թեան իշխանը Տօգդ. Տէլիանիս, եղ-
 բայրը նախարարապետին, — տեսակ մը
 հանդիսաւոր ու հեղինակաւոր մինիսդը։
 — Այցելութեան կէսը անցուցինք ի-
 րենց հետ խօսելով բանախօսութեան
 վրայ։ Ըզեղային աշխատանքո միշտ
 ինծի դիւրի։ Է այնչափ որչափ Աթենք
 հասած վայրկենիս, սակայն, այս
 անհանգստութենէն ի վեր, որմէ բըռ-
 նուած եմ, սկիւմայ ստիպուած եմ
 խնայել ուժերս։

Սեղանս ծածկուած է հետս իմ

բերած բոլոր լուսանկարներով — քուկդ
 մեծ յաջողութիւն գտած է. — կրկին ուն-
 կունքով, երկայնաձև կարասի մը մէջ,
 և ոչուն յատակէն կը մզուի շուրը
 (այս կերպով աւելի զով կը մնայ) —
 միշտ ունիմ երկայն ճիւղեր որթան-
 տունի, եղևնի, ու գեղեցիկ վարդերու,
 զոր ինծի կը զրկեն Փալէրի բարեկամ-
 ներս — գափնեվարդեր նաև ու գե-
 ղեցիկ գոյ կարմիր խիտ խոշոր նըռ-
 ներ սեղանին վրայ։ Գուն մէջն ես այս
 աշնային ժպիտներուն ու յաճախ առ-
 տուն արթննալու՝ կը նայիմ գատկե-
 րիդ ու կ'ըսեմ. մայրիկ, ու կ'սկսիմ լալ։

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ ստուարահատոր
 թղթակցութիւնը կ'սկսի 1880 էն. կը
 ըզկանայ տնհամար նամակներէ, իր
 Մօրն ու իր երկու կրտսեր եղբայրնե-
 րու ուղղուած, որոնց հրատարակու-
 թիւնն ապահովապէս պիտի օր մը յօ-
 րինէ մին ճոխագէյն գոհարներէն, ա-
 նոր միւս գրական երկերուն մէջ։

Արգարե, Աթէնքի իր բարեկամ-
 ները կը զրկէին իրեն ծաղիկներ,
 թփի ճիւղեր ու պտուղներ քաղուած
 գեղեցիկ պաշտէյներէն որոնք շքեղ
 զարդն են քաղքին մարմարէ տունե-
 րուն, պալատներո ն ու մօտիկ կայա-
 րաններուն, որոնց յաղթական փրթ-
 թումը զինք կը հրճուեցնէր. բայց ինք
 կը սիրէր մանաւանդ հեշտագին հո-
 տոտումը մուրտի, դժնիկի. ամբարտի
 ու վայրի վարդենեաց զգլխիչ բուրու-
 մին։ Իր ամենահաճելի ծաղիկներն էին
 յասմիկը, մեխակը, գափնեվարդը, վայրի
 վարդը, ևն։ Ու պտուղներուն մէջէն,
 լեռներուն ելակները, գեղձերը, կո-
 ընթոսի վարդագոյն խաղաղը, որ կը
 կոչուի Ափրոդիսի ծիծ։

Հրապարակագիրներն ու մատե-
 գիրները կը փութային անոր ընծայել
 իրենց գլխաւոր երկերէն, ամենէն փա-
 ղաքուշ ձօներով։ Անոնց հետը, կ'եր-
 թար երբեմն յոյն մայրաքաղաքին հրա-
 շագեղ շրջակայքը, ու երբ հասնէր

խաղաղաւէտ վայր մը, կը հանգչէր հոն ձիթենիի մը կամ պլատանի մը շուքը, ու շուտով բնութեան կամ բանաստեղծութեան վրայ տենդոս խօսակցութիւն մը կը բանար իր բարեկամներուն հետ, զորս կը թովէր իր ամենագորովալի զեղումներով, որոնք ի յայտ կը բերէին իր գերընտիր զգայնութիւնը, իր ճաշակները, իր խոկերը, իր արուեստագիտական յղացումները: Յետոյ, իր վճիտ նայուածքով տաշփածուօրէն կը հետեւէր հեզահոսան չարժումին մօտիկ աղբիւրի մը շրթուն, կը հիանար դարաւոր ծառերուն վրայ տեսակ մը խորհրդակրօնային պաշտումով, ինչպէս նաև զինք շրջապատող նկարագեղ բուսականութեան վրայ, ու ի վերջոյ կը կառչէր մանաւանդ աննման կապոյտին Աթէնքի երկնքին, որուն պաշտելի պայծառութիւնը հեշտալիօրէն կը յուզէր իր բանաստեղծի սիրտը, ու ինք, յայտնապէս կը թուէր մնալ անհուն հրապոյրի մ'ազգեցութեան տակ:

Կ'երթայ նաև Ելեւիս ու Դափնի, Աթէնքի մօտ, ուր կան կարևոր աւերակներ, որոնք զանի շատ կը շահագրգռեն: Միւս կողմէ, յաճախագէտ են իր այցերը՝ թանգարաններուն, նկարիչներուն ու քանդակագործներուն աշխատանոցներուն, բիւզանդական մատուռներուն, համալսարանին, ակադեմիային, ազգային մատենադարանին, որոնք զինք հիմնովին կը ծանօթացնեն ժամանակակից Յունաստանին ու իրեն թոյլ կուտան զայն իր կարգին Եւրոպային յայտնել իր գրուածներով — այնքան հանճարեղօրէն — որ, յանկարծ, իր անունը կ'ստանայ անվիճելի հեղինակութիւն մը Բարիլի գիտնական մեծ աշխարհին մէջ:

Բայց անի աւելի ու աւելի քաշող տեղն է Շերամիկը, որ անոր կը ներշնչէ — իր ի Յունաստան երկրորդ վերադարձին — իր ամենայարգի ու-

սումնասիրութիւններէն մին Աթէնքի ԳեթեջՄԱՆԱՏՈՒՆԸ, Բարիլ հրատարակուած, 1898 Նոյ. 1ին, Մեռելոց տօնին առիթովը: Այս ուսումնասիրութեան վրայ է որ ԺԱՆ ՅԻՆՍ կը հուշակէ Տիգրան Երկաթը «Ալեկալեծ հայ կենդանի գրագէտը»:

Անոր սիրած ուրիշ տեղ մըն ալ Ակրոպօլն է, ուր անոր աչքին կ'երևի Ատտիկէի վաղեմի մայրաքաղաքը, փառքուն ու փողփողուն իր աստուածներով, իր հերոսներով, իր արձանագործներով, իր խորհուրդներով ու իր յիշակերտներով: Հին միջնաբերդին գազաթէն՝ հանդիսաւոր ու գրաւիչ տեսքը լեռներուն, բլուրներուն ու շրջապատող դաշտերուն. Փալէրի գեղեցկափայլ ծովափին պատկերն ու երկնային գրժբեթին հրաշալի պայծառութիւնը, այնքան ուժգին կ'ազգեն որ կը թափանցէ գաղնիքը նախնիներուն, որոնք ուզած են ընել այս մոգական գաւառը դից ու դիցունհիներուն արժանաւոր ապաստանը: Սալամինայի ծովախորշն ալ իր վրայ մեծ ձգողութիւն մը կը ներգործէ: Չը յոգնիր զայն դիտելէ, խորհելով անշուշտ, աթինական նաւատորմիկին գլուխն անցած թեմիստոկլէսին անուանի յաղթութիւններուն, Քսերքսէսի պարսկական արշաւանքին ատեն ի Յունաստան:

Բայց, Ակրոպօլի անուանի աւերակներուն մէջէն անցած ատեն, յանկարծ, կանգ կ'առնէ զմայլած. ապառաժին ստորոտը, դեռ քիչ մ'առաջ նշմարեց դիւթական քանդակաւոր զոր կընծայէ 1821 ի վերարթնցած նոր Աթէնքը, երբ որ ա'լ վառնտուեցան բարբարոսները, անլուր ճիգերուն և զոհերուն գնովը, ո՞հ, ո՞րքան կը սիրէր դիտել Հելլէններուն հպարտ, յաղթական, կեանքով, երանութեամբ ու հարստութեամբ յզփայցած ու յորդուն այս գեղանի նոր քաղաքը, որ նորէն եղած է գրեթէ Աբելեքի Ակադեմիան

չնորհիւ նրաձառութեան, գործունէութեան, իմացականութեան ու յոյն ցեղը բնորոշող համերաշխութեան, վեհանձնութեան ու անձնուիրութեան սգիին:

Այսպէս ուրեմն, յնորական չէ՛ հաւատալ ու ընդունիլ թէ մտածումը, բանավարութիւնն ու սուրբ քաջութիւնը գերակշիռ են բիրտ ուժին, երբ կռուի բռնուին իրարու հետ:

Վերջին գաշու արշալոյսին վերաշինուած Աթէնքն է ասոր ամենէն հանողիչ ու կենդանի վկան:

Տիգրան Երկաթ այս բանը կ'ըմբռնէր ու երեսը գարձընելով դէպ 'ի Պարթեւոնի կանգուն մնացած չքնաղ սիւներն ու որմերու բեկորները, կը խորհէր աւերակնելով, արիւնով ծածկուած ամայացած Հայաստանին վրայ, կ'ուխտէրիւրովի տալ իր կեանքը՝ փութացնելու համար յարութիւնը, ոչ պիտի շուտով կատարուի անշուշտ Յունաստանի յարութեանը պէս, եթէ Հայերը համաձայնին պաշտպանել Մայր-Հայրենիքը, նման քոյր-ազգին արի ու խիզախ պաշտպաններուն: Այն ատեն իրենք ալ պիտի կրնան վերաշինել ՍԻՍՈՒԱՆԸ:

Ու այս երազի լուսեղէն ալիքներուն մէջ լողալով, կը դիտէր հեռուն, Կիլիկիոյ ձիճաղկոտ ծովափունքը, կը տեսնէր հոն խիտ անտառը նաւերուն, շարժումը մեծ հրապարակներուն: Այսան ու Միսիսը կը վերականգնէին: Անարզաբան ու Սիսը խնջոյքի ու խաղի մէջ, ամբողջ Կիլիկիան դրախտ էր, ուր կը ճեմէին Շնորհալիի ու Համբրոնացիի վեհափառ ստուերները...:

Սակայն Տիգրան Երկաթ կը պատրաստէ իր պայքարն 'ի Ֆրանսա: Արդէն ստէպ կը թղթակցի խիստ ազգեցիկ ընկերվարական երեսփոխաններու հետ, որոնք իրեն կը խոստանան յարուցանել Խորհրդարանը Հայկական Հարցին 'ի նպատ:

Նոյն ատենները, թախանձուեցաւ

երթալ Լոնտոն, բայց ինք հասկցաւ բացարձակ անօգտակարութիւնը հայրենասիրական պայքարի մը յԱնգլիա, ուր Կլատտիօնի քաղաքականութիւնն ու սկզբունքները մարած էին:

Ուստի 1896 Նոյ. 8 ին կը մեկնի Յունաստանէն ու կ'երթալ ուղղակի Բարիզ, բայց դէպքերը շուտով պիտի վերագարձընեն զանի իր գեղեցիկ երազներուն ցանկալի երկիրը, ուր հիմնեց գործողութեան իր մեծ կեդրոնը:

Ս. Բիրաս

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա Ա Պ Ա Յ Ն Ն

— ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՄԱՌԻԻ Գրքարդը ձրգտան ներկայացումը տեղի կունենայ այս իրիկուն Բիրասիսի մէջ ժամը ճիշդ 9ին:

Կը լսենք թէ բաւական թուով օթեակներու ու թիկնաթոռնկրու տոմսերը տեղաւորուած են արդէն: Յաջողութիւն:

— Տեղւոյս Հայկական Նուագախումբին համար «Արշալոյս»ի մէջ Բէիզեան Կարապետ պէյի շինել տուած համազգեստները մաշած ըլլալով կը լսենք որ այժմեան Խնամակալութիւնը 100 ոսկի տրամադրած է նոր համազգեստներ կարել տալու համար:

Կը լսենք նաև որ այդ համազգեստներու պատրաստութիւնը յանձնուած է տեղւոյս ազգային գերձակներէն Տ. Լ. Նիզամեանի: Ուրեմն անշուշտ կեցցէ Խնամակալութիւն:

— Մայիս 29 թիւ Փար տ'Ալէքսանտրի մէջ երեցած Կիրակի օրուան խեղկատակութենէն, — որ կեցցէ Խնամակալութիւնը կարգարացնէ, այդ կեցցէները միայն Պօլոս բաշայի ու Բարթոլ պէյի ըրած նախարատուութեանց վերագրելով, — արդար զայրոյթով մը լեցուեր է նորին Վսեմութիւն Միհրան պէյ Գալֆաեանը, որ

բնականաբար չը պիտի կրնար հան-
դուրժել այս տեսակ երևոյթի մը. Ե-
րևոյթ մը՝ որուն հետ բնաւ չէր կըր-
նար հաշտուիլ ամէն գնով ձեռք բեր-
ուած խնամակալի մը իրաւունքը, որ
նուիրագործ ուեցաւ միայն իր Ղամ-
սրզներովը: Մենք չենսիւլթ, մը կը
նկատենք Փար տ'Ալէքսանտրի կողմէ
այս բացարձակ խեղաթիւրումը, որ
անշուշտ ներշնչուած էր ամենուս
գիտցած ազբիւրէն. . . :

— ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ «ՀՐԱՉԵԱՅ» ԽՈՒՄԻ
մը կազմուած է Գահիրէ Ապրիլ 1 էն ի վեր:
Անորանիկ ներկայացումը, «Վանի Հայ-
դուկներ», վաղը պիտի տեղի ունենայ Եգիպ-
տական թատրոնին մէջ ի Գահիրէ:
Յաջողութիւն եւ յարատեւութիւն:

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Սուրիացի հայ երիտասարդ մը, sui-
րիներէ ի վեր Եգիպտոս հաստատուած,

Եւրոպական քանի մը լեզուներու հմուտ,
ու քաջ արարագէտ միանգամայն, պատ-
րաս է վաճառականաց արարելէն
թղթակցութիւնները կատարել գոհացու-
ցիչ պայմաններով:

Մանրամասնութեանց համար դի-
մել Խմբագրատունս կամ «ԱՐԱՔՍ» ի
սպարանը:

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛
հայերէն, թէ՛ գաղղիերէն եւ
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ,
ինչ որ նուազ կարեւոր չէ,
ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն
ընդգէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամազուլիս 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունունին ընդգէմ հրդեհի ինչպէս
նաև Մովային, Գետային եւ Յամաքային փոխադրութեանց արկածներու գէմ.

Դիւրամատչելի գներ եւ պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ

Աղեփասնորիս, պզտիկ Մէնչիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ըն-
կերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամազուլիս 5,000,000 ֆրանկ